

04 AUG 2010

631.1

թ - 88

ՍԻՆ ՀՈԳԺՈՂԿՈՄԵՏ

ԳՅՈՒՆՍՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 82

ԳՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՄԾԱԿԵԼ ՀՈՂԸ
ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-1930

19 APR 2013

631.1

P-88

№ 82


ՀԱՅԿ ՀԱՂԺՈՂԿՈՄԱՏ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 82

ԳՐ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՄԾԱԿԵԼ ՀՈՂԸ
ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ-1930



15544-52

ԻՆՉՊԵՍ ՄԵԱԿԵԼ ՀՈՂԸ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

ՎՈՐ ՀՈՂԵՐՆ ԵՆ ՀԱՐՄԱՐ ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

Ինչպես բոլոր կուլտուրական բույսերի նույնպես և բամբակի համար հողի մշակութունը վճռական նշանակություն ունի: Դա այն հիմքն է, վորի վրա կառուցվում են շենքը: Յեթե այդ հիմքը խախտւում է՝ շենքը կը փլվի: Հողի մշակութունը յեթե կանոնավոր չի կատարված, ապա բամբակացանը լավ բերք ստանալու հույս չպիտի ունենա: Բամբակենին պատկանում է կուլտուրական այն բույսերի շարքին, վորոնք հողի, կլիմայի և խնամքի վերաբերմամբ վորոշ պահանջներ ունի: Ամենից առաջ բամբակենին լավ աճում են թեթև, փուխր, բերրի հողերում: Սառը, ծանր կավային հողերում նա լավ չի աճում: Սյդպիսի հողերից կանոնավոր բերք ստանալու համար նրանց պիտի հատուկ մշակության յենթարկել:

Հայաստանում աղուտ (շոռաքլաթ) հողեր չառ կան: Փարձերը ցուլց են տվել, վոր բամբակը, ընդհանրապես, աղուտ հողեր չի սիրում և սյդպիսի հողերում բերք ել չի տալիս:

Հրատ. № 1064

Գրառեպ. № 4028 (բ) Պատ. № 258 Տիրաժ 5000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում

Յեթե նման հողերում աղերի (շոռերի) տոկոսն աննշան է, բամբակենին թեև բերք տալիս է բայց այդ բերքը քիչ է լինում:

Ամենավտանգավոր և փնասակար հողերը՝ սև աղուտ հողերն են (սև շոռաքայթներ), վորտեղ բամբակ բոլորովին չի բսնում: Նման հողաշերտեր պատահում են Ղուրդուղուլիի շրջանի «Կարմիր բանակային» կոմսոնալում, Եվջիլարում և ուրիշ տեղերում: Բարեբախտաբար այդպիսի տեղեր մեզանում կան շատ քիչ, ահպես վոր նրանք մեր բամբակագործությանը զգալի փնասներ պատճառել չեն կարող:

Վոչ մի դեպքում չի կարելի շատ ուժեղ պարարտացնել գոմաղբով կամ ալլ պարարտանյութերով և ապա բամբակ ցանել, վորովհետև նման հողերում բամբակենու աճեցողությունը կատարվում է շատ ուժեղ, ճյուղերը բազմանում են, լցվում կնգուղներով, ցողունը բարձրանում է և նրա կյանքը յերկարում է մինչ աֆն աստիճան, վոր դեռ կնգուղները չբացված՝ աշնան սառնամանիքները վրա լին հասնում ու նրան փնասում են, բամբակի թուփն իսկույն սառչում է և ապա սկսում չորանալ, իսկ նրա վրա լեղած կնգուղները խակ լինելով ու դեռ չբացված՝ սառչում են և ձեռքով սեղմելիս փոխանակ մազի հանգիպելու, կնգուղի ծալքից ջուր է դուրս գալիս:

Ճահիճներն ու ճահճացող հողերը նույնպես բամբակենու ցանքերի համար պիտանի չեն: Բամբակենուն անվանում են, «արևի զավակ», վորովհետև նա շատ տաքուկյուն սիրող բույս է: Իհարկե, բամբակենու արմատները խոնավություն են պահանջում, բայց յեթե այդ խոնավությունը շատ է, յեթե արմատները մշտապես ջրի մեջ են գտնվում, այդ դեպքում բամբակենին յերկար չի դիմանում, նա սկսում է նախ դեղնել, հետո լել կնգուղները թափել:

Այսպես են որինակ՝ Չանգիբասարի մի շաբբ հողերը, վորտեղ գարնան ու ամռան ջուրը գտնվում է 8—10 վերջոկ խորության վրա: Այդ բանը խիստ կերպով ազդում է բամբակի վրա և նա սպասված բերքը չի տալիս:

Բացի դրանից, ճահճացած հողերում սերմը դեռ չձլած՝ փստում է: Բամբակենին չի սիրում, յերբ նրա արտի վրա անհաշիվ ջուր են բաց թողնում: Շատ տեղերում կանաչ բամբակենու արտերի մեջտեղից տեղ-տեղ նկատվում են դեղնած կղզիներ: Դա նրանից է, վոր այդ տեղերը փոս են լեղել և ջրելու ժամանակ ջուրը հավաքվել ու յերկար ժամանակ մնացել է ալդտեղ: Այդ բանն ազդում է բամբակենու վրա և նա դեղնում է:

Բամբակի արտը յերեք կողմից պետք է

ազատ լինի և միայն հյուսիսային կողմից կարելի չե ցանկապատել բարձր ծառերով կամ թթենու տնկիններով՝ նրան պաշտպանելու համար հյուսիսային քամիներից և ցրտից։ Այդ բանն ամենայն հեշտությամբ կարելի չե անել կոլեկտիվների խոշորացրած հողամասերում, իսկ մանր անհատական տնտեսութուններում չի կարելի, բանի վոր մի արտադրող հյուսիսային կողմը մշակել հարավային կողմը կկազմի։ Ցանկապատելու համար խիտ շարքերով կարելի չե տնկել նաև բարդիներ, վորոնց միաժամանակ կարելի չե վորպես շինանյութ ոգտագործել։

ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

Բամբակենու հողի մշակության գլխավոր աշխատանքը՝ մոլախոտերի դեմ պայքարելն ե։ Հայտնի չե, թե մոլախոտերը վորքան մեծ վնասներ են պատճառում գյուղացու տնտեսությանը, ստիպելով նրան հսկայական ծախսեր կատարելու՝ այդ մոլախոտերի դեմ պայքարելու համար։ Մոլախոտերը զուր տեղը հողից սննդանյութեր են վերցնում և մեծ քանակությամբ խոնավութուն գոլորշիացնում։

Մի գիտնական հաշվել ե. ամեն մի հեկտարից մոլախոտերը գոլորշիացնում են մոտ 8,334 տոնն ջուր և այդպիսի ժամանակ, չերբկուլաուրա-

կան բույսերը խոնավության մեծ պահանջ ունեն։ Կրկնավարը կանուխ կատարելու գեպքում, վարած հողերում բանում են մոլախոտերը, վորոնք ցելաջրից անմիջապես հետո ուժեղ կերպով աճում են և սկսում են խեղդել հողի տակից դուրս յեկող բամբակի ծիլերը։

Դրա առաջն առնելու համար (թեև միջիջավելի ծախս կպահանջի) անհրաժեշտ ե նախ քան ցանելը մոլախոտերով հարուստ ցելը յերեսից վարել (վոչ խոր), վորով այդ մոլախոտերի մեծ մասն արմատախիլ կլինեն և դրանից հետո միայն կարելի չե բամբակ ցանել։

Շատ մոլախոտերի արմատներ հողի մեջ յավելի խորն են գնացած լինում, նրանց մի մասն աճում ե նաև արմատներով ու սերմերով, և ահա հենց այդ պատճառով նրանց պիտի արմատախիլ անել, դրա համար ել հողը վարում են աշնանից։ Աշնան վարը 4—6 վերջով խորությամբ կտրելով մոլախոտերի արմատները նրանց այնպես ե, շրջում վոր կանաչ մասերն ընկնում են հողի տակը, իսկ արմատները՝ հողի յերեսը։ Կանաչ մասերը զրկված լինելով ոգից ու արեից և ծածկված լինելով հողի կոշտերով՝ չորանում են, արմատներն ել արեից ու բամբակներից են չորանում։

Վարելուց հետո յերկաթե «գիգ-զագ» փոց-

խով հողը պիտի փոցխել վերն իր՝ հողի մեջ խորը գնացող ատամներով հողից դուրս ե քաշում մոլախոտերի արմատները: Դրանից հետո հատուկ փոցխով կամ ձեռքով հեշտ ե լինում հավաքել դուրս չեկած այդ արմատները: Այդպես են վարվում որինակ մուտ և չալրոտ հողերում:

Մոլախոտերից ամենամեծ վնաս տվող խոտը, այսպես կոչված, «դանդուրուդանն» ե, վորից այնքան վախենում են մեր բամբակացանները և շատ հաճախ հրաժարվում են դանդուրուդանոտ հողերում ցանք անել, վորոնք թեպետ և վորակով շատ բարձր են, բայց վարակված լինելով այդ խոտերով վախեցրել են մեր բամբակացաններին:

Ղանդուրուդանի դեմ կարելի չե կովել հետևյալ կերպ.—

Բամբակի կամ բոստանի կամ մի այլ կուլտուրայի բերքը հավաքելուց անմիջապես հետո պետք ե, վորքան կարելի չե, հողը խորը վարել, այնուհետե ցելի վրա ջուր կապել մինչև հետևյալ տարվա գարնան սկիզբը, վորից հետո հողը կրկնահերկ անել և ցանել բամբակ: Դա կոչվում ե «արս», այսինքն՝ յերբ առաջ հողը ջրում են, ապա «քիշը» գալուց հետո ցանում: «Արս»-ի այս ձևը կոչվում ե ձմեռվա արատ:

Այդ ձևով ջուրը միջանի ամիս շարունակ ազդելով դանդուրուդանի արմատների վրա, նրանց մեռցնում և քաջայում ե: Սակայն կարող ե պատահել, վոր գարնանը նրա վորոշ մասը նորից կանաչի, վորը կարելի չե քաղհանել ամռան կուլտիվացիայի ժամանակ: Յեթե այդպիսի հողերի վրա յերկրորդ տարին ել ջուրը կապվի, ապա դանդուրուդանի արմատները միանգամայն կփտեն և բամբակացանն ել նրանից չի վախենա:

Ղանդուրուդանը սերմակալում ե և առատ սերմ տալիս: Այդ սերմերը հանելուց հետո թափվում են հողի վրա, վարակում ամբողջ դաշտը: Դրա դեմ կովելու միջոցներից մեկն ել հասունացած հասկերի կրելն ու վոչնչացնելն ե: Կտրած հասկերը կամ պիտի այրել և կամ հավաքել և մի խոր փոսում թաղել:

Ղանդուրուդանը վնասում ե վոչմիայն բամբակին: Նա տարածված ե, մանավանդ, խաղողի այգիներում, բոստաններում, նուհիսիկ ամենախիտ ցանված առվույտը չի կարողանում խեղդել նրա աճեցողութունը: Այնպես վոր, բույսերի խիտ ցանելն անգամ այդ մոլախոտի դեմ կովելուն չի ոգնում:

Ղանդուրուդանի դեմ հաջողությամբ կարելի չե կովել նաև ձիաքարշկուլտիվատորով, շար-

քաղցան բամբակի շարքերը միբանի անգամ
փխրացնելով—քաղհանելով:

Այդ միջոցն աչքաթող չպետք է անել:

ՅԵՐԲ Ե ՎԱՐԵԼ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԸ

Վերն ասացինք, վոր բամբակենին սիրում
է փուխը հողեր, վորտեղ ողջ և արևի տաքու-
թյունը թափանցում են առատորեն: Վաղուց
իվեր հայտնի չէ, վոր հողի մեջ տարվա տաք
չեղանակներին կատարվում են մի շարք պրոցես-
ներ, փոփոխություններ, վորի հետևանքով, հողը
«հասունանում» է:

Հողի հասնելու, այսինքն՝ պարարտանալու
համար անհրաժեշտ են՝ ոդ, տաքություն և խո-
նավություն: Բացի դրանից հողի մեջ ապրում
են միլիոնավոր մանրեներ, վորոնք նույնպես
խոշոր չափերով նպաստում են հողի հասունանա-
լուն: Առանց այդ մանրեների աշխատանքի,
մենք հողից վոչ մի բերք չենք կարող ստանալ:
Վորպեսզի այդ մանրեները լավ աշխատեն, ապա
պիտի ունենան նպաստավոր պայմաններ: Այդ
պայմաններն են՝ ողջ, տաքությունը և խոնա-
վորթյունը: Իսկ այդ պայմաններն ստեղծելու
համար անհրաժեշտ է, վոր հողի վերին շերտը
լինի փուխը, իսկ ներքին շերտը մեկ անգամ
հիմնովին վարված, փխրացված:

Այսպիսով, վարը հանդիսանում է բամբա-
կի հողի մշակութայն գլխավոր և հիմնական
պայմանը: Բամբակենին ավելի, քան մյուս կուլ-
տուրաները, պահանջում է՝ խոր վար՝ դրա պատ-
ճառն այն է, վոր նրա արմատը խորն է գնում
և այնտեղից էլ ստանում իրեն անհրաժեշտ խո-
նավությունն ու սնունդը:

Յեթե վարը կատարված է յերես, ասենք
2—3 վերջով խորությունը, այդ դեպքում, բամ-
բակի արմատը, քանի հողը փուխը է, խորն է
գնում, բայց հենց վոր հանդիպում է ամուր շերտին,
նրա աճեցողությունը դանդաղում է և սկսում է
կողարմատներ տալ, վորոնք իրենց շրջապատի
խոնավությունը կլանելուց հետո, հողը չորաց-
նում են, (գոլորշիացումը կատարվում է տերե-
ների միջոցով) և նորից ջրելու կարիք է զգաց-
վում: Իսկ յեթե գլխավոր արմատն ավելի խո-
րը գնացած լիներ, յեթե հողը փուխը լիներ,
արմատն այդտեղ խոնավություն կստանար և
յերկար ժամանակ ջրելու կարիք չեր լինի:

Ահա թե ինչ զնաս է պատճառում բամբա-
կենու արտի յերես վարելը: Բամբակացանը
պետք է լավ ճիշի այս հանգամանքը յեվ աշխա-
տի բամբակենու տեղը վարել 4 - 6 վերջով
խորությամբ:

Բամբակենու ցանքի տեղը պետք է վարել

աշնանից: Դա լավ բերք ստանալու գրավականն է: Բամբակենու կամ մի այլ բերքի բույսը հավաքելուց հետո հողն անմիջապես պետք է խորը վարել և այդպես թողնել մինչև գարուն: Այդ ժամանակամիջոցում վարված ցելի վրա վոչ մի աշխատանք չի կատարվում:

Աշնանավարն ավելի քան անհրաժեշտ է ծանր կավային հողերի համար, վորովհետև նրանց վարելուց միշտ էլ առաջ են գալիս մեծ կոշտեր: Փորձերը ցույց են տվել, թե վորքան դժվար է մեծ տարածության վրա փայտից շինած հատուկ մեծ մուրճերով ջարդել-փշրել աֆսանթիվ խոշոր կոշտերը, վորոնք առաջ են գալիս գարնանը կավային հողերը վարելիս:

Յեւ ահա ամեն տարի բամբակացանները ջարդում են այդ կոշտերը, վորպեսզի հնարավոր լինի գոնե շաղացան բամբակ ցանել: Մյուս կողմից՝ փայտերով այդ կոշտերի մանրացնելը մեծ ծախս է պահանջում, վորից հետո նույնիսկ անհնարին է բամբակի շարքացան անելը և հետագայում նրա մշակութունը կատարել կատարելագործված գործիքներով: Այդ բանից ազատվելու միակ միջոցը աշնանավարն է, յերբ կոշտերը անձրևի, ձյան ջրերի և քամիների ազդեցութունից հալվում - փշրվում են և հողը հետագա մշակութան համար տանելի դարձնում:

Աշնանից վարած կավային հողը, յեթե գարնանը կրկնավար արվի, նա այլևս մեծ կոշտեր չի տալ: «Զիգ-զագ» յերկաթե փոցիւր միանգամայն բավական է մնացած կոշտերը ջարդելու և հողը պատրաստելու շարքացանի (մեքենայով) համար:

Աշնանավարի առավելութուններից մեկն էլ այն է, վոր շրջելով հողը 4 - 6 վերշոկ խորությամբ, այնտեղ ձմեռող զանազան վնասատուների հարսնականները դուրս են գալիս հողի լերեսը, վորտեղ նրա մի մասը թռչունների կեր է դառնում, մյուս մասն էլ չդիմանալով ձմռան սառնամանիքներին՝ վոչնչանում են:

Աշնանը վարած հողը գարնանը նորից հակառակ ուղղությամբ պետք է կրկնահերկ անել: Կրկնահերկը չի կարելի կատարել, յերբ հողը դեռ շատ խոնավ է, վորը կարող է կպչել գութանի խոփերին. պիտի սպասել մինչև հողը, «քիշի» դա, միքիչ չորանա, ապա ձեռնարկել կրկնահերկին: Կրկնավարը պիտի անել աֆս հաշվով, վորպեսզի ապրիլի 10 - 15-ը հողը ցանելու համար պատրաստ լինի: Թեև մեր պայմաններում, միջին հաշվով, բամբակի ցանքի սկիզբը պիտի հաշվել ապրիլի 20-ից վոչ շուտ: Կրկնահերկը կատարելուց հետո արտը հակառակ ուղղությամբ պետք է փոցիւր յերկաթե «զիգ-զագ» փոցիւրով

մեկ կամ յերկու անգամ, իսկ յեթե հողը շատ կոշտեր ունի, այդ դեպքում պետք է փոցխել միջանի անգամ և այնքան, վորպեսզի կոշտերը փշրվելով ձվի մեծութունից ավելի չլինեն:

Յեթե կոշտերն այդքան չմանրանան, ապա դժվար է և մինչև անգամ անհնարին՝ նման հողերում բամբակը շարքացան մեքենայով ցանել:

Սովորաբար փուխը, թեթև հողերը փոցխելու համար գործ են ածում զիգ-զագ խոցխ, իսկ կոշտավոր հողերում գործադրվում է ափսեավառ փոցխեր:

Ափսեավոր փոցխերը բաղկացած են լինում 8 կամ 12 ափսեներից, իսկ տրակտորի համար-հատուկ ափսեավոր կամ դիսկավոր փոցխերն ունեն նույնիսկ 24 ափսե: Ափսեները պողպատից են: Նրանց շրջագիծն ամբողջովին սուր է, այնպես, վոր աշխատելիս ափսեները խրվում են հողի մեջ և իրենց ծանրության ու սուր լեզվով կտրատում են կոշտերը և այսպիսով մանրացնում նրանց:

Յերկու անգամ դիսկավոր փոցխով փոցխելուց հետո հողն արդեն ցանելու համար պատրաստ է: Իսկ յեթե յերկու անգամ դիսկելուց հետո, յերրորդ անգամը զիգ-զագով փոցխենք, այդ դեպքում հողը միանգամայն պատրաստ կլինի շարքացանի համար:

Կողբեկտիվ և խորհրդային տնտեսությունների առավելություններից մեկն էլ այն է, վոր գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների աշխատանքը նրանց համար ձեռնտու յե: Բերենք մի որինակ: Մի անգամ փայտով փոցխելը գյուղացու վրա նստում է 7 ուրբ. իսկ 3 անգամ յերկաթե փոցխով փոցխելը Սարգարաբադի մեքենա-տրակտորային կայանի վրա նստում է ընդամենը 1 ու 80 կ.: Կամ՝ մի անգամ փոցխելը գյուղացու վրա նստում 7 ու., իսկ մեքենա-տրակտորային կայանը նույն աշխատանքը կատարում է 60 կոպեկով: Հաշիվը կատարված է մեկ հեկտար տարածության համար:

Մինչև այժմ շատ բաժրակա գործական շրջաններում գործ են ածում փայտե փոցխեր, վորովհետև դրանք էժան են, այնինչ այդ փոցխերը կոշտերը մանրացնելու համար աննպատակահարմար են: Պիտի կանգնել փոցխի վրա և հետո բշել, այդ էլ իր նպատակին չի հասնում, վորովհետև փայտի փոցխը թեև կոշտերը մանրացնում է, բայց շատ ուշ: Պահանջվում է միջանի անգամ փոցխը տանել խաչաձև, վորպեսզի գոնե կիսով չափ հնար լինի փոցխել, կոշտերը մանրացնել:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՀՈՂԻ ՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Մեր պայմաններում բամբակացանները շատ հաճախ գարնան վարը ուշացնում են մինչև ապրիլի 20-ը, նույնիսկ մայիսի 15-ը. լինում են դեպքեր, յերբ վարը ձգձգվում է մինչև մայիսի 20—25-ը:

Գարուհը բացվելուն պես, յերբ հողը ախ-
քան ե չորանում, վոր հնարավորություն ե
տալիս վարելու, վոչ մի որ չպետք ե ուշացնել
այդ աշխատանքը: Առաժն ասում ե, Վժի որը
տարի չե պահում»: Ամեն ուշացած որը պա-
կասեցնում ե բերքը և փնասում բամբակացանի
տնտեսությանը: Դրա պատճառն ալն ե, վոր գար-
նանը հողում կատարվող (պրոցեսների) գոր-
ծողությունների թափը շատ ուժեղ ե լինում
և հողը հարստանում և ցանվող բույսերի հա-
մար անհրաժեշտ սննդանյութերով:

Գարնան վարը վոչ մի դեպքում չի կարելի ուշացնել և արդեն ապրիլի 20-ին հողը բամբակ ցանելու համար պիտի պատրաստ լինի: Սա նույնպես հիմնական պայման է բամբակագործության համար:

Աշխատավարձն ավելի կարևոր և առավելա-
ցանած հողերի համար: Հայտնի չե, վոր 6—7
տարեկան առավելաշուշանի ստորերկրյա հաստ

ցողուն և արժաններ, վորոնց վրա կան ուռու-
ցիկներ—բշտիկներ և վորոնք իրենց յեջ սա-
րուհաւորում են մեծ քանակութեամբ սննդա-
նյութեր:

Առվույտի տեղը պետք է վարել աշնանից վերջին յերեսը քաղելուց հետո: Մենք կասենք զեռ ավելի ուշ, վորովհետև վերջին հնձից հետո կարելի յե մի անգամ ել ջրել և անասուններ արածեցնելու համար ստանալ շատ լավ խոտ: Համենայն դեպս առվույտի տեղը պետք է վարել մոշ ուշ, քան նոյեմբերի 1-ը:

Հնձեկուց և վարեկուց հետո պետք է ցելը ջրել, վորպեսզի արմատների վտեկու համար անհրաժեշտ խոնավություն լինի: Այդ դեպքում նուխպես չի խանգարի, յեթե ձմռան «արատ» կատարվի:

Գոմաղբը և այլ պարարտանյութերը մեր բամբակացաններին հայտնի չեն, սակայն հողը նրանցով պարարտացնելիս պիտի հողի հետ խառնել այն խորուխյամբ, վորպեսզի ողը և խոնավությունը կարողանան նրանց հասնել 3—4 վերջով խորությամբ, վորովհետև չեթե այդ պարարտանյութերը մնացին հողի լերեսը, ալդ զեպքում նրանց մի մասն, ալն ել արժեքավոր մասըն ողը կցնդի, ուժը կկորցնի, կչորանա:

Հանքային պարարտանյութերը քուսպի

ալլուրի հետ խառը գարնանը նախ պիտի շաղ տալ դաշտերում, ապա միաջն վարել, իսկ յեթե հողը աշնանն է վարած, այդ դեպքում պարարտանյութը պիտի շաղ տալ ցելի վրա և ապա կատարել կրկնավար:

Բամբակենու արտը գարնանը կամ աշնանը նախքան վարելը, անհրաժեշտ է բամբակի ցողունները դաշտից հավաքել: Մինչև այժմ ընդունված էր ցողունները հնձելը, այնպես վոր ցողունի ստորյերկրյա մասն իր արմատներով մնում է հողի մեջ:

Այժմ յերբ մենք ունենք կազմակերպված կոլլեկտիվ տնտեսություններ, վորտեղ ամեն մի աշխատանք պետք է կատարվի գյուղատնտեսական գիտություն համաձայն, բոլորովին անթույլատրելի պետք է համարել ցողունների հնձելը: Թեև առաջին անգամ ցողունները ձեռքով արմատից հանելը դժվար կլինի, այնուամենայնիվ այդ աշխատանքը պետք է կատարել: Դա անհրաժեշտ է այն տեսակետից, վոր մի շարք սընկային հիվանդություններ ձմեռում են այդ ցողունների վրա և գարնանը նորից սկսում իրենց ավերածությունները:

Այսպես, նախքան հողը վարելը ցողունները արմատով պետք է հանել և ոգտագործել վորպես վառելիք: Թեպետ և շատերն այն կարծիքին

են, վոր ցողուններն արմատախիլ անելով մենք հողին ֆլաստում ենք, նրա հետ հողից դուրս քաշելով վորոշ սննդանյութեր, սակայն այդ ախքան էլ հիմնավոր կարծիք չէ, նախ նրա համար, վոր վառված ցողունի մոխիրը նորից դաշտ է գնում և յերկրորդը՝ նրա տարած սննդանյութերն այնքան աննշան են, վոր չարժե դրա համար սնկային հիվանդությունների վտանգին լենթարկել մեր բամբակենիները:

Վերը ասացինք, վոր աշնանավարը պետք է անել 4—6 վերջով խորություն, իսկ կրկնավարը 2—2½ վերջով խորություն, վորովհետև փորձերը ցույց են տվել, վոր յերբ գութանը վերցնում է վերին շերտը 2—2½ վերջով խորություն (իսկ այդ շերտը տաք է լինում), այդ դեպքում ծիլերը դուրս են գալիս հավասար և հետագա աճեցողությունը լինում է նորմալ: Իսկ յերբ խորը 3—4 վերջով խորություն է վերցնում շերտը, ապա այդ շերտերն ավելի սառն են լինում և այդ դեպքում ծիլերի՝ հողից դուրս գալն ուշանում է, դանդաղում, մինչդեռ այդ ժամանակամիջոցում արտը ծածկվում է մոլախոտերով և սկսում խեղդել բամբակենուն:

Ստեղծվում է մի դժվար դրություն. կամ պետք է արտը նորից ջրել, վորպեսզի կեղևը փուխրանա և բամբակն սկսի ծիլել, կամ թե

կեղևը փշրելու համար արտը պետք է փոցխել յերկաթե զիգ-զագ փոցխով, իսկ այս դեպքում ել արորվում-փշրվում են դուրս յեկած բոլոր ծիւրերը և յերկրորդ՝ փոցխելիս նրա սուրատամ-նեքը հողից դուրս են քաշում ծիւրերի մի մասը:

Այնուամենայնիվ, յեթե վերևում հիշված կանոնը չի կատարված, այդ դեպքում ջրելուց պետք է խուսափել և մի անգամ միայն փոցխել զիգ-զագ փոցխով, այն ել կավային հողերում, իսկ քիչ փուխը հողերում նույնիսկ փոցխելն արգելվում է. այստեղ կեղևը փշրելու համար կարելի չէ միայն ատամնավոր տափանով նորից տափանել:

Աշնան վարը վոչնչացնում է մեծ կոշտերը, փտեցնում է արմատները, դարձնելով նրանց մարսելի սննդանյութ. վոչնչացնում է հողի տակ ձմեռող վնասատուները. արագացնում հողի մեջ կատարվող գործողությունները, վորի հետևանքով հողը հարստանում է սննդանյութերով և հեշտացնում դարնան աշխատանքները, միաժամանակ բարձրացնելով բերքը:

Սա հողագործության մեջ հիմնական որենք է:

ԻՆՋՊԵՍ ՊԱՀՊԱՆԷԼ ՇՈՂԻ ՍԵՋ ԽՈՆԱՎՈՒՅՑՈՒՆԸ

Բամբակը հաճախակի ջրել չի սիրում. գրանից նա կորցնում է բերքի կեսը, հետևաբար

հողն աջնպես պետք է մշակել, վոր կարիք չլինի շուտ շուտ ջրելու:

Հողի մշակության ժամանակ անընդհատ փուխը պահելով այն, մենք հնարավորություն ենք տալիս խոնավությունը յերկար մնալու հողի մեջ և չգոլորշիանալ. հաճախ ջրելը հողին վնասում է այն տեսակետից, վոր մի կողմից հողն ամրանում է և մյուս կողմից ել ամեն անգամ ջրելը հալեցնում է բամբակենու համար պիտանի, վորոշ քանակությամբ, պատրաստի աղեր և իր հետ տանում է դեպի հողի ստորին շերտեր և այնքան խոր, վոր բամբակի արմատները չեն կարողանում ոգտվել այդ աղերից սննդանյութերից և նրանք մնում են անոգտագործելի:

Վորպեսդի հողը չչորանա և հաճախակի ջրելու կարիք չլինի, անհրաժեշտ է նրա վերին շերտը միշտ փուխը պահել, վորովհետև փուխը շերտի միջոցով ջուրը ներքևից վերև չի բարձրանում, չի գոլորշիանում և խոնավությունը յերկար ժամանակ մնում է հողի մեջ:

Շատ հաճախ բերքը հավաքելուց հետո տավարը բաց են թողնում արտերն արածելու. պարզ է, վոր անասունները կոխ տալով՝ պնդացնում են հողը, իսկ մենք գիտենք, վոր պնդացած ու կավային հողերում կան շատ բարակ խողովակներ—աղուններ, վորոնցով ջուրը ներքին

շերտերից բարձրանում ե դեպի հողի յերեսը և գոլորշիանում, ճիշտ այնպես, ինչպես նավթը բարձրանում ե պատրույգի միջոցով դեպի վեր:

Յեթե հողի վերին շերտը փուխը ե, այդ խողովակները—առունները կտրվում են, վերջանում են այնտեղ, վորտեղից սկսում ե փուխը շերտը. խոնավությունը դրանից վերև չի բարձրանում և մնում ե հողում: Ուրեմն՝ հողի մեջ խոնավությունը պահպանելու համար անհրաժեշտ ե հողը մշակել: Վոչ մի դեպքում թույլատրելի չե սերմը քցել կոշտավոր հողի մեջ, վորովհետև միևնույնն ե բերք չի ստացվի. մյուս կողմից ել չի կարելի հողը մշակել այնքան, վոր նրա յերեսը փոշի դառնա:

Դա նույնպես փաստակար ե, վորովհետև խոնավությունը բարձրանալով ներքևից վերև, և հասնելով փոշուն՝ կանգ ե առնում ու սերմատեղը մնում ե չոր, իսկ անձրևաշրերը փոշին ամրացնում են, կեղև կազմում և թույլ չեն տալիս, վոր ջրելու ժամանակ ջուրն իջնի ներքև, կամ հողի մեջ ող և լույս խաղա:

Այդ դեպքում կեղևն անմիջապես պետք ե շարդել:

Ամենալավ մշակությունն այն ե, վոր հողերում ամենամեծ կոշտը լինի ձվի մեծության. այդ դեպքում հողը լավ ե ջրվում. ջուրն իջնում

ե շատ խորը և հողը շատ դանդաղ ե չորանում, մշտապես խոնավություն մատակարարելով բույսին: Ողը նույնպես, նման ձևով մշակված հողերում, իջնում ե խորը, հասնում ե բույսի արմատներին, անունդ ու շնչառություն տալիս նրանց:

ՋՐԵԼՈՒ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՍԲԱԿԻ ԲԵՐՔԻ ՎՐԱ

Գոյություն ունի ջրելու յերկու ձև՝ չորացին (սալուտար) և արատ:

Սալուտար ձևն այն ե, վոր մինչև այժմ գործադրվում ե Հայաստանի բամբակագործական բոլոր շրջաններում (բացի Դավալուցից), այսինքն սերմը ցանում են չոր հողում և հետո ջրում:

Իսկ արատը դրա հակառակն ե. հողը գարնան ջրում են և յերբ «քիշը» գալիս ե, վարում են, փոցխում և ապա մեքենայով ցանում, այլևս յերկրորդ անգամ չեն ջրում և սերմն ինքն իրեն ծլում ե:

Արատը, մանավանդ ծանր կավային հողերում, շատ ձեռնտու յե, վորովհետև ջրելուց հետո այդպիսի հողերում առաջանում ե հաստ կեղև, վորին հասարակ տափանը չի կարող փրկարացնել:

Այդ կեղևը սեղմում ե բամբակի մատղաշ ծիլերը, իսկ մյուսներին ել չի թողնում դուրս

գալ հողի տակից, վոր յերկար ֆնալուց հետո
ծիլը խեղդվում ե: Նման դեպքերում, վորպես
փոքրագույն չարիք, կեղևի վրայով պետք ե մի
անգամ անյկացնել զիգ-զագ յերկաթե փոցի:

Մի: չգեո արատի դեպքում սերմն ընկնում
ե փուխը ու խոնավ շերտի մեջ, վորտեղ նա
ծլում ե հեշտությամբ և առանց արգելքի դուրս
ե գալիս հողի յերեսը:

Գլխավոր վտանգը արատի դեպքում այն ե,
վոր յեթե «քիշի» ժամանակն անցավ, այլևս
այդ ձևի ցանք չի կարելի անել և ստիպված՝
ցանելուց հետո հողը պիտի նորից ջրել: Այս հան-
գամանքի վրա մեր բամբակացանները պիտի
լուրջ ուշադրութիւն դարձնեն, վորովհետև
մոտ ապագայում «արատի» ձևը պետք ե
ընդունել: Իսկ սապսուարը՝ վորպես աննպատա-
կահարմար ձև բոլորովին վերացնել:

Այսպիսով նախքան հողը ցանելը, պետք ե
ջրել հետո ցանել:

Հողի մշակութայն վերաբերյալ տալով այս
համառոտ տեղեկությունները պետք ե ընդմիջտ
հիշել, վոր կանոնավոր մշակութիւնը հավա-
սառ ե կես պարտաւսացման:



ՀՀ Ազգային գրադարան



N0280201

15507

ԳԻՆԸ 4 ԿՈՊ. ՄԱՍ. ($\frac{3}{4}$ մամուլ)



Գր. Կումանյան

Как обрабатывать землю
под хлопчатник

Госиздат ССР Армении
Эривань—1930